ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի դեկտեմբերի 22-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-1»*** ծածկագրով պայմանագրում **2019 թվականի սեպտեմբերի 20-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի 1.3 կետի և N 2 հավելված Օրացուցային գրաֆիկի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1082-Ն որոշում և պայմանագրի 8.5-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Սողոմոնյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ a_soghomonyan@mincult.am:

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N3

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» 09 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սասունասար» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Հայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-1» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-N որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը թույլտվություն տալու մասին» N 1082-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կապալառուն համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 1.3 կետում «**30.10.2018 թ.**» բառերը փոխարինել «**01.09.2019 թ.**» բառերով:

1.1.2 Պայմանագրի N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ «**30.10.2018 թ.**» բառերը փոխարինել «**01.09.2019 թ.**» բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011017713 ՀՎՀՀ 02698732	«Սասունասար» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Ազատության նրբանցք, 4/75 Հեռ.՝ (94) 20-52-69, (99) 20-52-76 էլ.հասցե՝ stepanyan-andranik@rambler.ru «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Հ/Հ 115004675449 ՀՎՀՀ 01516603
Գլխավոր քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն՝ _____ Ս. Հայրապետյան (ստորագրություն) Կ.Տ